կայծան (չախմախ), կայծքար և արեթ (ղավ)։ Արեթը պատրաստում էին կաղնի, ուռի և թաքղի ծառերի ընթերում աճող ծառասունկից, որը եվում էին խաշված փալուտի ջրի և կաղնի վայտի մոխրի թորված ջրով։ Ամեն տուն ինքն էր պատրաստում իր տան օգտագործելիք բուրումնավետ արեթը։

Հայ թե բուրդ ընակչության մեջ պահպանված էր ավանդական այն սովորությունը, թե մունետաս ամանից կերակուր ուտելը սրբապղծություն է։ Ամտեր մունետաս էին համարում, եթե սխալմամբ տացի տաշտի մեջ ճերմակեղեն կամ երեխայի շոր էին լվանում, երբ մուկ էր ընկնում կամ անմարուր նկատված որևէ բանով ամանից ջուր էին առնում։ Այս առթիվ շատ բծախնդիր էին տան կանայք, ի մասնավորի մամիկը կամ տան մեծ հարսը (թոռների տեր)։ Մարուր ամանը և անմարուրը (լվացքի և լոլանալու տաշտ, շան լակի ման, լվացքի ջուր լցնելու քարղան) պահում էին պատ-վատ տեղերում և դդուշանում աղտոտը (մունետաս) խառնել մարուրի հետ, իսկ եթե պատահեր, որ ամաններից մեկը վերը հիշված պարագաների տակ մնար, եթե կավեղեն էր, կոտրում էին և կամ դասում մունետասների կարգը, իսկ եթե ղղնձեղեն էր, մինչև որ կլայեկել չտային, չէին օգտագործում, եթե փայտե ման էր (դուշ, տեփուր, շերեփ, դդալ և այլն) ու եթե շունն էր լիզել, կամ մուկն էր վրան ման եկել, անմիջապես եռացրած մոխրաջրով մի լավ խաշում և եկեղեցուց բերված խաչի օրհնված ջրով ցողում էին, իսկ եթե եկեղեցի չունեին, լուսաղբյուրի ջրով լվանում ու բռնում էին խունկի ծխի վրա, այդ ձևով այն մարբելով պղծվածությունից։

Օթախի օջախի վերևում, պատերի վրա զետեղում էին ցորենի, զարու և կորեկի հասկերից հյուսված փնջիկներ և անթառամ ծաղկեպսակներ, որոնք փոխվում էին ամեն տարի և նորերը նոր ձևերով հյուսկեր, փնջեր կամ պսակներ դնում։ Նույն ձևով զարդարում էին թոնրատան դռան վերին մասը, ամբարը, դդլնոց կախված սյունը, իսկ մուտքի դռան պայտի, կապույտ ուլունքի և սխտորի սովորական շարոցին ավելացնում էին չորացած և երկար ժամանակ դիմացող ծաղկեփնջեր, միշտ նախապատվություն տալով ցորենի և զարու հասկերից հյուսված ծղոտներին և անթառամ ծաղկին։

Օթախը միշտ ճերմակցնելու (սպիտակեցնելու), մարուր պահելու և առհասարակ օթախը կամ տունը ծաղկազարդելու աշխատանքները կատարում էին տան չափահաս աղջիկները, որոնք մրրցում էին իրար հետ ավելի գեղեցիկ, ավելի հաշակավոր զարդարանքներ ստեղծագործելու համար։

Տան ամբարի տեսանելի մի վայրում դնում էին գտակից մի շարաթ առաջ, ծաղկազարդի (ծտոդարդար) կիրակի օրն օրհնված ուռի շյուղերից պատրաստված հյուսկ կամ պսակ, որը պահում էին մինչև եկող տարվա ծաղկազարդի օրը։

Բացի աղաների զոնախներից ու աղաներից և խաթուններից, մնացյալ ողջ գյուղացիությունը ընդհանուր ձևերով պահպանում և օգտագործում էր այն բոլորը, ինչ վերը նկարագրվեց։ Աղքատները և հարուստները զանազանվում էին նրանով, որ մեկը շատ ուներ, մյուսը՝ քիչ, բայց և ուներ։ Եթե տոհմային մեծ գերդաստանի տանը ութիցտասը խնոցի կամ տիկ էր հարվում, չքավորինը մեկ հատ էր լինում, եթե տոհմային տան ծալքում քսանից մինչև հիսուն գորգ, կապերտ, ճեճիմ, նաշխուն բարձ, հյուրերի համար պահված զութնի երեսներով տասից ավելի անկողին և վերմակ էր լինում, աղքատն էլ, բացի իր տեղաշորից, իր ուժերին համապատասխան, թեև քիչ, բայց ուներ հյուրի տակ փռելու անկողին։ Եթե տոհմային տան բիլերում տասից ավելի մեծ ու փոքր խոնչա կար, աղքատի թոնրատան մի անկյունում գրված էր լինում մի կամ երկու խոնչա և այլն։ Զեն ու սովորությունը մնում էր նույնը, փոխվում էին միայն որակը, քանակը և չափերը։

Լեռնաշխարհում քուրսիի օգտագործումը ընդհանրացած չէր, դրա դերը կատարում էին թոնիրը և առավելապես գոմերի ու ախոռների սաքուներն ու թախտերը։ Քուրսին գործածում էին դաշտային շրջանները, ուր անտառներ չկային ու փայտը փողով էին գնում։

ԶԳԵՍՏ ԵՎ ԶԱՐԴԱՐԱՆՔ

Դերսիմում, ուր դարեր շարունակ հայն ու քուրդն ապրել էին կողք-կողքի, անվթար պահպանել էին իրենց ավանդություններն ու սովորությունները, քիչ տարբերությամբ՝ նաև տարազն ու զարդարանքը։ Հնարավոր չէր զանազանել հայը քրդից և անջատել մեկը մյուսից, որովհետև ապրում էին նույն միջավայրում և բնական նույն պայմաններում։

Զգեստ։ Երեխաների հագուստներ։ Մինչև ութ տարեկան երկսեռ երեխաները հագնում էին միաձև, միայն թե տղաները ղլիներին դնում էին բրդից հյուսված գտակ, իսկ աղջիկները կապում էին

մայրիմա (թաշկինակ, մենտիլ՝ հայերեն, տսմալ՝ քրդերեն։

Մարմնին հագնում էին շապիկ, հայերը՝ ճերմակ կտավից, քրդերը՝ ալ։ Շապկի երկարությունը հասնում էր մինչև ծնկներից մի թիզ վար, երկար թևերը մինչև դաստակները, ուր փոթիկի վրայից կախված էր լինում երկու մատի լայնքով փոթեղը, որի մի կողմը ծակի տեղ օգտագործվող թելից հյուսված օղակն էր, իսկ մյուս կողմը՝ կոճակի տեղ ծառայող գնդիկը։

Շապիկի վերին մասը, այսինքն՝ պորտից մինչև վիզը, բացված էր՝ շապիկը գլխից հանելու համար։ Այդ բացվածքն առանց ծակի և կոճակի էր, միայն վզի մոտ, ուր կարված էր յախան (օձիք), փոթկրի վրա գործած օղակի (իլիկ) և գնդիկի (թելից հյուսված կոճակ) նման մի օղակ և մի գնդիկ ուներ, որը ծառայում էր վզին մոտիկ շապիկի օձիքը կոճկելուն։ Շապիկի վարի մասի աջ և ձախ կողմերը չորս մատնաչափ ճեղքված էր լինում։

Վարի մասում (պորտից վար) հագնում էին նույն կտորից կարված թումբան (վարտիք), որի հնտույքն ավելի լայն էր ու կոչվում էր դմակ, երկարությունը հասնում էր մինչև ոտքի կոճիկները, ուր նույն կտորից կարված էին երկու նեղ շերտ, որոնք փոթիկի դեր էին կատարում և կապվում էին կոճիկների վրա։

Թումբանի վերին մասը երկու մատի լայնքով ներս դարձված և թակալ կարով կարված էր, որը կոչում էին խոնճդարձ կամ խոնճդարձ։ Այդ դարձվածքի պորտի կողմի վրա մի մատնաչափ անցք էին բացում, որպեսզի կարելի լիներ խոնճուն խոնճեպետով անցընել խոնճդարձի մեջ և կապել։ Թումբանի երկու ոտքերի միացված տեղը, ուր կարված էր լինում տեպլեն, տղոց միզելու համար փոքր ծակ էին թողնում, որը դրսից չէր երևում, նախ որ երկու ոտքերի մեջտեղը, աղի կենտրոնում էր և հետո փոթերը ծածկում էին այն։ Այս ծակը կոչում էին ջրթափ։ Տղաները շապիկի փեշերը դնում էին թումբանի մեջ և կապում խոնճայով (ուշխուր)։ Թումբանի ոտքերի կապված մասը զետեղում էին բուճի (գուլպա) մեջ և կապում բճընկապով։ Բուճի վրայից հագնում էին շարբխ (տրեխ)։

Թումբանի և շապիկի վրայից հագնում էին մանուսայից (շապկաձև) կարված երկար թևերով, շապիկից ավելի երկար էնթերին (էնթարի), որը պորտից վեր միայն բացվածք ուներ, վարի մասը շապիկի նման ամեն կողմից կարված էր, ուստի ծածկում էր շալոիկն ու թումբանը մինչև ոտքի կոճիկները։ Աղջիկների էնթերին տղաների հագածից տարբերելու համար մի մատ ավելի էին ձգում և ետևի մասը փոթ-փոթ անում։

Այն, ինչ ասվեց, ձմռան հագուստի մասին էր, իսկ ամառը առանց վարտիքի, ոտաբոբիկ, միայն մի շապիկով և մեջքին կապված մի լարանով շրջում էին սար ու ձոր։

Պետք է ավելացնել, թե ձմռանը երեխաները երբ դուրս էին գալիս խաղալու կամ որևէ տնային աշխատանք կատարելու, էնթերիի վրայից հագնում էին աբա։ Սա տնային գործվածք էր, առավելապես թիֆթիկ այծերի մետաքսանման և շատ փափուկ մազից հյուսված կամ գործված։ Արան մի տեսակ թիկնոց էր, որն իջնում էր մինչև գոտկատեղը, թևերը հասնում էին մինչև արմունկները, պաշտպանում թիկունքը և կողերը։ Կոճակներ չուներ, առջևի մասը մնում էր բաց։ Արայի կիսաթևի տակից կախված էին նույն հյուսվածքից մազափնջիկներ, իսկ երիզները, վարի մասը և թևերի բերանը ղայթանով ասեղնագործված էին։

Զափաճաս տղամարդկանց հագուստներ։ Շապիկի, թումբանի, բուճի և շարբխի ձևի և գործածության մեջ ոչ մի տարբերություն չկար, փոխվում էր տարազը։ Շապիկի և թումբանի վրայից հագնում էին իշլիկ, որն ուներ երկար թևեր, նույնպես փոթիկով և իլիկով։ Իշլիկն ավելի կարճ էր լինում, քան շապիկը, հասնում էր մինչև մի թիզ ծունկից վեր, ուներ օձիք, որը կոճկվում էր բկից մինչև փեշերի վարի ծայրը։ Իշլիկը կարում էին Արաբկիրի մանուսայից, թևերի տակ դնում էին ձազ (եռանկյուն կտոր), որպեսզի թևերը հանդիստ շարժվեին, կարում էին թակալով (թակլկար)։

Շապիկի վարի փեշերը դնում էին թումբանի մեջ, իսկ իշլիկի փեշերը մնում էին դուրսը և ծածկում թումբանի խոնճդարձը։

Թումբանի վրայից հագնում էին շալ (սա չշփոթել կանանց գլխին, ուսին կամ հետույքին կապված շալի հետ), որին քրդերը շալվար էին ասում։ Շալը բրդից գործված կտորեղեն էր՝ սրճագույն, երբեմն սև, նայած ոչխարի բրդի գույնին։ Հագուստեղենի կտորեղենները կամ հումքի թելը չէին ներկում, որովհետև կային սրճագույն և սև ոչխարներ, որոնք առանց ներկվելու պահում էին իրենց բնական գույնը։ Ներկում էին միայն սպիտակ բրդի թելը[1]։

---

[1] Քրդերն էլ հագնում էին այն շալվարը, ինչ հայերը, միայն թե ամենը պաշտոնական ընդունելությունների կամ տոնակատարության դեպքում առթիվ հագնում էին բրդե թելից հյուսված սպիտակ շալվար։

Շալն ուներ թումբանի ձև, միայն ավելի լայն, բայց ավելի կարճ էր։ Սթև թումբանի վոզքերը հասնում էին մինչև կոճիկները և կապվում այնտեղ, շալի փոզքերը հասնում էին կոճիկից մի թիզ վեր և նեղանում տղղրին համեմատ, բերանը կլոր էր, առանց ճեղքերի և կապի։ Շալի դմակը ավելի լայն էր, խոնճղարձի լայնությունը՝ երկու մատ, աղը՝ լայն ու խորը։ Ուր կապված էր տեպլեն, դանվում էր ջրթափի ծակը։ Շալի երկու կողմերին կային ղրպաններ, որոնց բերանները ղայթանով ասեղնագործված էին, իսկ խոնճղարձը կտորից էին կարում։ Սթև թումբանի փաշաները գնում էին բուճի մեջ, ապա շալինը մինչև բուճը չէր հասնում, այնպես որ տղամարդիկ բուճի վրայից անցընում էին թոզլուխ (առանց թաթի, վարը հաղիվ ոտը միջից անցնելու չափ նեղ, վերը ադդրի լայնությամբ խողովակաձև գործված), վարի մասը դնում բուճի մեջ, իսկ վրայի մասը, որ հասնում էր մինչև ծնկատակը, իր մեջ առնում էր շալի վարի բերանը։ Թոզլուխն էլ բուճի նման ուներ բրդի թելից հյուսված կապ, որի ծայրին փոքրիկ փնջիկներ կային ու երբ շալի բերանը դնում էին թոզլուխի մեջ և թոզլուխ-կապով կապում այն, փնջիկները գրսի կողմից երկու մատնաչափ կախվում էին թոզլուխի վրա, այն ուղղությամբ, ինչ ուղղությամբ կախվում էին բենակապի փնջիկները, այսինքն՝ դեպի գուրս, ծնկներից վար դեպի աջ ու ձախ։

Խոնճան խոնճղարձի մեջ անցընում էին փայտե մախաթով, որը կոչվում էր խոնճնվետ։

Շալի վրայից կապում էին բաղմագույն կամ միագույն գոտի, որի երկարությունը երկուսից երկուսուկես զուլաճ էր, լայնքը՝ արմունկաչափ։ Գոտիի մի մասը իջնում էր շալի վրա և ծածկում խոնճգարձը, իսկ մյուս մասը հասնում էր մինչև պորտատեղը։ Հասարակ գյուղացիների գործած գոտին տեղական էր։ Ինչպես հագուստի կտորեղենը, նույնպես և գոտին գործում էին բրդի թելից, ապա լմում, հասլում, խտացնում և փափկացնում։ Երիտասարդների գոտիներն ավելի շատ ծաղկուն կամ գունավոր էին լինում, քան տարեցներինը։ Գոտու երկու ծայրերին մորուսաձև փնջիկներ կային։

Շալի նույն կտորից կարում էին նաև ելեկը. որն առանց թևի, կուրծքը սրտի ձևով բաց, առանց օձիքի հագնելիք էր, ուներ հինգից-վեց իլիկ և գնգիկ։ Քղանցքներն իրար վրա չէին հանվում, այլ մնում էին ուղղահայաց և դեմ առ դեմ կոճկվում էին։

Ելեկը հագնում էին իշլիկի վրայից, որը իջնում էր մինչև գոտկատեղը։ Ելեկի քղանցքների եզերքները, կրծքի բացվածքի սրտաձև շրջանակը ղայթանով ասեղնագործված էին, իսկ վարի մասի եզերքը ոչ միայն թակալված, այլև խաչասեղված էր լինում։

Ղեզեբին շալի և ելեկի լրացուցիչ մասն էր կազմում։ Կարում էին նույն կտորից։ Ղեզեբիի թևերը երկար էին, հասնում էին մինչև արմունկները։ Իշլիկի փոթիկի եզերքի մի մասն էր միայն Երևում ղեղեբիի թևաբերանի տակից։ Կուրծքը բաց էր, քղանցքները իրար չէին հասնում, կուրծքը և թևաբերանը՝ առանց կոճակի։ Ղեզեբին, որ նույն սալթան էր, հագնում էին ելեկի վրայից, որը հասնում էր մինչև գոտկատեղը և երկու մատ ավելի երկար էր, քան ելեկը։ Ղեզեբիի քղանցքների (կրծքի եզերքները) վարի կոր մասը ղայթանով ասեղնագործված էին, ղրպաններ չուներ։

Նույն կտորից, նույն ձևերով հագնում էին նաև քրդերը։ Ուրեմն, հայ և քուրդ տղամարդու ներքին ու արտաքին հագուստները հետևյալներն էին (հայերեն և քրդերեն անվանումներով)՝ շապիկ-շապիկ, թումբան-թումբան, իշլիկ-իշլիկ շալ-շալվար, ելեկ-ելեկ, սալթա-ղեղեբի, բուճ-բուճ, թոզլուխ-թոզլուխ, շարբխ-շարբխ։

Պատանիները գլխին գնում էին նախշուն արտիշի, շափահասները՝ ֆոլոս կամ ֆոլոզ, առանց ֆինտիի, իսկ ծերերը՝ քոլոզ կամ անծոպ ֆես կամ ֆյուլլան (քեչե-քյուլլահ), որոնք եզերքը փաթաթում էին ոլորված հինտի կամ փուշի։

Հինտին գունավոր ծաղկուն յազման էր, որը ավելի հաստ էր լինում, քան լաչակը և որի ծավալի միջին չափը 0,80 քառակուսի մետր էր, առանձին շրջանակներով և երեք մատ եզրանցքներով։ Բամբակի նուրբ թելից գործված այս շղարշը, որ կաղապարներով նախշում էին, մեկից մինչև տասը հատ իրար միացած էին լինում և ծախելու ժամանակ, գնորդի պահանջին համապատասխան, անջատում ու տալիս էին։ Հինտին գնում էին շրջկենտրոնների առևտրականներից կամ գյուղերում շրջող փերեզակներից։

Տարեց տղամարդիկ իրենց գլխանոցի եզրին փաթաթում էին երեքից մինչև հինգ զույգ (շուխտ) ոլորված հինտի։

Տիզլիկը կարում էին կապույտ մահուդի կտավից։ Սթև շալն ու ղեղեբին ձմռան հագուստ էին կամ պաշտոնական զգեստ, տիզլիկը գործի հագուստ էր, որի ձևը նման էր շալի ձևին, միայն դմակը՝ ավելի փոքր, բայց ոչ զոկայի նման։ Տիզլիկի ծնկների միջի կողմից կարում էին քառակուսի կտոր, որին ասում էին ծնկնտեղ։ Տեպլեն և աղը

մնում էին նույնը՝ գույգ գրպանով, խոնջդարձով և ջրթափով։

Տիպլիկն էլ խոնձայի միջոցով ետևի կողմը փոթ-փոթ էին անում և դմակի ձև տալիս, որովհետև թե շալի և թե տիպլիկի ետևի մասը երեք մար էր, առջևը՝ երկու մար։

Ամռանը ելեկ չէին հագնում, իսկ իշլիկին փոխարինում էր նույն կապույտ կտորից կարված իշլիկաձև չնքմեն, որը հագնում էին շապիկի վրայից և վարի փեշերը դնում շալի մեջ։ Թևև կոճակներ ուներ, բայց չէին կոճկում։ Կուրծքը բաց, թևվերը վեր սոթտած մինչև արմունկները, գնում էին աշխատանքի։

Ամառ թև ձմեռ գոտին մնում էր անփոփոխ, գյուղացին առանց գոտու չէր կարող աշխատել։ Գոտին մեջքը պնդացնում, որովայնը սեղմում, կողերը պաշտպանում և ամրապնդում էր։

Տարեց տղամարդկանց ճագուստներ։ Հասակավորների պաշտոնական տեղական տարազը միևնույնն էր՝ տակի թումբան-շապկից, իշլիկ-ելեկից մինչև ղեզեքին մնում էր նույնը, միայն տարիքավորները հագնում էին անթարի (էնթերի) առանց շալի (շալվար)։

Անթարին կազմված էր չորս մարից, երկու մար պետենին (թիկունք), երկու մար առջևում, թևերի տակ կարում էին նույն կտորից ձագ, որը եռանկյունաձև էր լինում և հնարավորություն էր տալիս թևերն ազատ շարժելու, ավելի ճիշտ, ձախը լայնացնում էր թևի վերին մասը և պահում համաչափությունը ուսի կլորության հետ։

Մարը կտորի լայնության չափս էր։ Մի մարը նույն կտորի ամբողջական լայնքն է, երկու մարը իրար կարած, առանց որևէ ճեղքվածքի, ուսից մինչև ծնկատեղից չորս մատ վար բռնում էր ամբողջ պետենը, աջ և ձախ կողմի մարերը պետենի մարերին կարում էին ղոլթուղից մինչև կոնքոսկրը, որից վար չէին կարում և պետենի ու առջևի մարի միջի կոնքոսկրից մինչև ծնկներից չորս մատ վար մնում էր իրար չմիացած ճեղքվածք, որի ներսի կողմը երկու մատ լայնությամբ երիզ էին կարում, իսկ դրսի կողմից, բացվածքի երկայնությամբ՝ ղայթան։

Պետենի մարերի միացված տեղից վար ձգված ճեղքվածքին շաf կամ ցաf էին ասում, այդպիսով, անթարին մեջքից վեր երկու ցաքով երեք ղոնաա էր կազմում։

Անթարիի միջի աստառը կարմիր ալից (գունավոր կտավ) կամ կապույտ կտավից (մահուդի) էր։ Երբեմն աստառը կապույտ կտավից էին դնում, իսկ անթարիի կտորը առավելապես Արաբկիրի մանուսայից կամ ղուրնիից էր։ Թևերը հասնում էին մինչև դաստակները, ուր երեք մատ խորությամբ շար էին ցցում, որի եզերքները ղայթանով բանված էին լինում։

Անթարին հագնում էին թումբանի և շապիկի վրայից։ Կրծքի ճեղքվածքի բացվածքը սրտաձև, իսկ քղանցքներն առանց կոճակի բերում էին մեկը մյուսի վրա, ապա վրայից կապում գոտին։

Անթարիի աջ և ձախ կողմերին, շաքերից քիչ վերև ներքնագրպաններ կային, որոնց բերանը դրսից ղայթանով եզերված էր։ Գրպանները հորիզոնական ձևով իջնում էին աջ ու ձախ մարերի տակ։

Աշխատելու ժամանակ անթարիի երկու փեշերի ծայրերը վեր էին առնում և ամրացնում գոտուն, թևերը մինչև արմունկները վեր էին քաշում, կուրծքը բաց թողնում։ Նույնը և՝ շապիկինը։

Անթարիի վրայից հագնում էին թիկնոց (աբա), որի մասին վերը խոսվեց։ Այս ձևով հագնում էին տարեցները, սրոնք ևս հարսանիքների, ուխտագնացության կամ կոչունքների ժամանակ հագնում էին պաշտոնական ազգային տարազ՝ ղեզեքի, ելեկ, շալ (շալվար) և գոտի։

Լեռնաշխարհի գյուղացիության ամենօրյա ոտնամանը չարըխն էր (տրեխ), իսկ պաշտոնականը և ամառվա քաղի ու կալի ժամանակ հագնելիքը նաև ճասլն էր։ Ծերերը տան մեջ հագնում էին սեկից կարած մես, որը պատրաստում էին ուլի կամ դառան մորթուց և կարում թակլկարով։ Մեսը բուռի ձև ուներ, հագնում էին ձմռանը՝ բուռի վրայից, իսկ տան պաշտոնական կոշիկը ղոնտուռան էր, որը ընդհանուրի սեփականությունն էր։

Անկախ վերը նշվածներից, տան մեծ-պապը, ռեսը, քեհյան, տանուտերը պաշտոնական ընդունելություններին, հարսանիքի, ուխտագնացության կամ կոչունքների ժամանակ հագնում էին ժառանգական քյուրքը։ Քյուրքը կարում էին աղվեսի, կզաքիսի կամ արջի մորթուց։ Ուներ լայն ու երկար թևեր, լայն պետեն և փեշեր (քղանցք)։ Քյուրքը չէին կոճկում, այլ քղանցքներն իրար վրա էին բերում կամ առնում էին ուղղակի ուսերին, առանց թևերը հագնելու։

Քյուրքի թևերի աստառը, գրպանները մահուդի կտավից էին, իսկ ներքնաստառը՝ առավելապես բրդից գործված նուրբ կտորից։ Եթե շապիկը, թումբանը, ելեկը, իշլիկը կարվում էին տանը, ընտանիքի մասնագիտացած մեկ կամ ավելի անդամների կողմից, ապա քյուրքը կարել էին տալիս շրջկենտրոններում գործող մասնավոր քյուրքճինի-

րին և կամ ձևոր բերում փոխանակության միջոցով։

Տան մեծի մահից հետո թյուրքը ժառանգարար անցնում էր նրա անդրանիկ զավակին։ Այն մի տեսակ ընդհանրական սեփականություն էր և օգտագործվում էր, ըստ պատշաճի, նաև տան մյուս անդամների կողմից։

Լեռնաշխարհի գյուղերում կարի մեքենաների մասին գաղափար չունեին։ Ձարդացած էր ձեռնարարը, որը թեև ժամանակ շատ էր խլում, բայց իր որակով չէր զիջում մեքենակարին։ Թակալը (թակլկար) երկկողմանի կար էր, կարծես թե մեքենայով կարված, մի կտորից մյուսը բաց տեղ չկար, ինչպես դրսի, նույնպես և ներսի կարերը հավասար մեծությամբ ուղղահայաց կամ հորիզոնական մի գիծ էին կազմում։ Շուլալը (շուլլել) թակալի տարբեր մի ձևն էր. կարը կարին չէր կպչում, մի ասեղբերան առնված կարի մինչև մյուս ասեղբերանի տարածությունը, փոքր բաց տեղ էր մնում։ Խաչկարը երկու նպատակի էր ծառայում, նախ՝ նախշի, ապա՝ ամուր կարի։ Իշլիկի բպանցրները խաչկարով էին կարում։ Կար և շուխարակալը՝ իրարից քիչ հեռու, նույն հավասար ուղղությամբ։ Թելկարը օգտագործում էին հաստ կտորներ կարելիս, որը նմանում էր կարի մեքենայի զույգ կարին։ Եզրկարը (փեշկար) բոլորովին տարբեր բնույթ ուներ։ Հագուստի եզերքները, ուր գայթան չէին օգտագործում, եզրակարով էին ամրացնում։ Եզրակարը հագուստի եզերքները մաշվելուց պաշտպանելու մի տեսակ միջոց էր, որն ուղղակի պարզ կար չէր, այլ մի տեսակ քով-քովի բանված։ Խիտ-խիտ, ասեղնագործ այս կարը մասնագիտական աշխատանք էր, որը կատարում էին չտիհաս աղջիկները և նոր հարսները։ Կլիկկարը հյուսք էր, ասեղնագործ գայթանի նման ամրացված կոճակի դիմացի եզրկարին, որին զուգընթաց կարում էին կոճակը։

Սագ։ Եթե թյուրքի գործածությունը հատուկ մարդկանց առանձնաշնորհ էր, սագոն ընդհանրական տարազ էր, որը ձմռանը անթարիի և սալթայի վրայից հագնում էին ծերերը։ Սագոն կարում էին տանը գործված բրդե կտորից։ Բաղկանում էր չորս մարից, ուներ մահուդի կտավից աստառ, թևերը հասնում էին մինչև արմունկները, աջ և ձախ կողմերում՝ զրպաններ, իջնում էր ծնկատեղից մինչև չորս մատ վար, կոճակներ չուներ, կուրծքը բաց էր, քղանցքները հասնում էին իրար։ Սագոն առավելապես գցում էին ուսերին։

Եթե այծենակաճը (քեչե) հովվական անթև արտահագուստ էր, պատրաստված թաղիքից, սագոն թևև թևավոր, բայց ուսերին գցվող համաձև հագուստ էր։

Ձարմանալի թող չթվա, եթե ասվի, թե հակառակ վերը բերված տարազների ապպային բնույթին, և գործածական ընդհանուր ձևին, և հակառակ լեռնաշխարհի կլիմայական խիստ պայմաններին, Դերսիմի լեռնականների մեծամասնության ամենօրյա գործածական տարազը բաղկանում էր կուրծքը սրտաձև բաց շապիկից, թումբանից, սալթայից և գոտուց։ Ամռանը սալթա էլ չէին հագնում, ման էին գալիս թումբան-շապիկով, իսկ ձմռանը կուրծքերնին բաց, սառցի շերտեր կախված բեխերից և մորուսից, առանց մրսելու վախն ունենալու շրջում էին լեռ ու ձոր։ Վերը գրանցված տարազները պաշտոնական բնույթ էին կրում, մեծամասնության օգտագործածը սպիտակ կտավից շապիկ-թումբանն էր։

Լեռնաշխարհի բոլոր բնակիչները, հայ թե քուրդ, առանց սեռի, դավանանքի և տարիքի խտրության, ամառ թե ձմեռ պառկում էին մերկ։ Հայերն ասում էին՝ մորից մերկ, քրդերը՝ ռուր (մերկ)։ Անկողին էին մտնում առանց որևէ ներքնահագուստի։

Կանանց հագուստներ։ Դերսիմի լեռնարնակ հայերի և քրդերի տարազների միջև գրեթե տարբերություններ չկային, միայն հայերը շապիկը կարում էին ամերիկան կապույտ կտավից, իսկ քրդերը կարմիր, ալ կտորից, ավելի ծերերը՝ կապույտ մահուդի կտավից։

Կանանց շապիկն ավելի երկար էր լինում, քան տղամարդկանցը, հասնում էր ոտքի կոճերին և վարի եզերքը երեք մատնաչափ ասեղնագործված էր լինում։ Թևերը երկար էին, հատման տեղը՝ փոթիկավոր, փոթերի վրա կարում էին երեք մատ լայնությամբ բոքնկալ (փոքնդարձ), որի լայնքը համապատասխանում էր դաստակի հաստությանը և կոճկվում էր։

Շապկի աջ և ձախ կողմերում հինգ մատնաչափ խորությամբ ճեղքվածքներ կային (չաք), որոնց եզերքները եզրակարով ասեղնագործված էին, իսկ պորտից մինչև վիզը ուղիղ գծով ճեղքվածք կար։

Կանանց վարտիքն ավելի լայն էր լինում, վերին մասը նման էր տղամարդկանց շալվարին, ետևը՝ փոթ-փոթ իրար պուզմայված և խոնճդարձի միջից անցրված խոնճայով, դիստրի հատման վայրում հանգուցված։

Թումբանը կարում էին զուրնիից, փազենից (ծաղկուն բամբակյա կտոր) և ալանայից (մե-



Նկ. 23. 1. Գողնոցի զոտի, 2. կրծկալ, 3. զողնոց, 4. իլիկի գայթան, 5. կոճակ, 6. իլիկ (կոճակի սղակ), 7. տոնօրյա նախշուն լաչակ—ա. ուլունք, բ. շուշաուլունք, գ. փուլ, 8. աղեղ—ա. կաշվե թոկ, բ. աղեղի ճիպոտ, 9. աղեղ (բամբակ զզելու), 10. աղնփաթ, 11. սանտերք (բուրդ զզելու), 12. հենք։

տաքսախառն)։ Հայ կանանց վարտիքն ավելի նեղ էր, քան քրդերինը, հայերի վարտիքի վերի մասը չորս մար էր, քրդերինը՝ վեց մար, իսկ աղից վար համեմատաբար ավելի նեղանալով, ոտքի կոճերի վերևը կապում էին նույն կտորից կարված երիզներով։ Վարտիքներն առհասարակ աստառով էին,

գրսի կտորն անպայման ծաղկուն, իսկ աստառը՝ միապույն ալ կտորից։

Թումբանի խոնարհ տարրեր կտորից էին կարում (առհասարակ կարմիր ալից կամ կապույտ մահուդից), որպեսզի բուն կտորից դանալանվեր։

Խանանը (ուշխուր) գունավոր թելից հյուսված, սամեկապից բիշ հատ կլոր լարան էր, մի ծայրը փոքրիկ փնջիկով։

Տարալի ընդհանուր ձևը պահպանելով հանդերձ, կային տեղեր, ուր կանայք շապիկի փեշերը դնում էին թումբանի մեջ, կային տեղեր էլ, ուր շապիկների երկարությունը հասնում էր գոտկատեղից մի թիզ վար։ Այսպես, Ալանաց, Պախիարցոց, Լոլանցոց աշիրեթների կանայք հագնում էին վարի եզերքը ամբողջովին ասեղնագործված կարճ շապիկ, որոնց փեշերը մնում էին թումբանից դուրս և ասեղնագործված մասը երևում էր անթարիի երկու եզերքները բացված ծայրերից։

Կանանց անթարիները տղամարդկանցից տարբերվում էին միայն իրենց երկարությամբ և դունագեղությամբ, այլապես ձևը, մարերի բաժանքը, չաքերի համաչափությունը մնում էր նույնը։

Կանայք նախապատվություն էին տալիս ծաղկուն գունավոր կտորներին և չէին սահմանափակվում մանուսայով ու ղութնիով, այլ օգտագործում էին ֆանելա (բամբակե տպածո), ալանա և այլ ծաղկուն կտորներ։

Շապիկի և թումբանի վրայից հագնում էին անթարի, որը հասնում էր մինչև ոտքի կոճիկները։ Անթարին կոճակներ չուներ, քղանցքները իրար վրա բերում և վրայից կապում էին գոգնոց։ Կրծքի սրտաձև բացվածքի վրայից կապում էին կրծկալ (կուրծքկալ)։

Գոգնոցը (միզար) գոտկատեղից մինչև կոճիկներից չորս մատ վեր, անթարիի ճեղքվածքները չծածկելու պայմանով, չաքերի եզերքից մի մատ լայնությամբ արանք ձգված և ուղիղ վար իջած, տեղական գործված բրդյա կտոր էր, որը լինում էր կարմիր, կապույտ, շագանակագույն։

Գոգնոցի եզերքների երեք կողմը երեք մատ լայնությամբ ասեղնագործված էր լինում, կապում էին անթարիի վրայից, իսկ գոտկատեղի կողմը գոգնոցի վրայից կապում էին գոգնոցկապ։ Սա կապերտի նման գործված, նախշուն թելերով ծաղկազարդված երկու մատ լայնությամբ և երեք ղուլաճ երկարությամբ տեղական արտադրանք էր, որի երկու ծայրերին նախշուն նույն թելերից ծոպեր կային։

Գոգնոցկապը (նաև՝ միզրակապ, ճոպր, քրդերեն՝ հոպր) կապում էին գոգնոցի վրայից և հանդրոտում (հանդուցել) ձախ կողմի անթարիի չաքի վերևում, որի ծոպիկները հասնում էին մինչև ծնկատեղը։ Գոգնոցը թևև տեղական գործված էր և ընդհանրապես գործածվում էր հայ և քուրդ գյուղացիների կողմից, բայց կային և չուխայից կարված ի եղեբքները ոսկեթել նախշված առավելապես կարմիր չուխա-գոգնոցներ, որ գործածում էին մեծահարուստ խանումները կամ խաթուններ։

Ուսերից մինչև գոգնոցի վերին մասը հասնող, ասվի կամ չուխա կտորից կարված, զույգ գայթան թելով եզրակալված և վզի տեղը խորը փորված ծնկալը կոչվում էր կրծկալ (կծկալ, կուրծքնկալ), երիգները ծոծրակի վրա իրար էին կապում ու հանգստում։ Կրծկալի վարի մասը հասնում էր գոգնոցի վերի մասին և գոգնոցկապը հավասարապես անցնում էր գոգնոցի և կրծկալի եզերքների վրայից։

Շալ-գոտին կանայք անթարիի վրայից էին կապում։ Դա քառակուսի, բայց եռանկյունաձև երկտակ արած շալ էր, որը ծածկում էր հետույքը և կողերի մի մասը, երկու ծայրերը կապում էին իրար ու մտցնում գոգնոցկապի տակ։ Շալ գոտիների մեծ մասը տեղական արտադրանք էր, գործում կամ հյուսում էին գունավոր թելից, նախշում գունավոր թելերով, իսկ ավելի նրբաճաշակ գոտիները գնում էին շրջկենտրոններից կամ գյուղերում շրջագայող փերեզակներից։ Նման շալ-գոտիները ստացվում էին Թոսիայից, Կյուրինից, Սպահանից և պարսկական այլ շրջաններից։ Թոսիայից (Թուրքիա) ստացված շալ-գոտիները կոչվում էին արտադրող քաղաքի անունով՝ Թոսիա, իսկ Պարսկաստանից ստացվածները՝ Լահոռի։

Գլխանոց։ Եթե աղջիկները գլուխներին կապում էին լաչակ, հարսները՝ հինտի, յաշմախ և թշկալ. տարիքավոր կանայք դնում էին ֆոֆի (քոֆթա), որը անծոպ ֆես էր, միջի կողմը բրդե բարձիկներով, վրայից ծածկում էին յաղմա, իսկ յաղմայի վրայից գցում բրդից հյուսված քառակուսի շալ, որը եռանկյունաձև ծալում և նակտրկապի ու յաղմայի վրայից գցում բրդից հյուսված քառակուսի շալ, որը իջեցնելով դեպի մեջքը, իսկ երկու ծայրերը հանգրստելով բկի տակ։ Գլխանոցը կամ գլխշորը կարում էին նաև մութ գույնի զանազան կտորներից, որոնք ստացվում էին շրջկենտրոններից։

Ջափահաս աղջիկները սովորական օրերին գլուխներին կապում էին սպիտակ, եզերքները ծաղկուն լաչակ, որը 0,80 քմ. նուրբ շղարշ էր (դյուլպենտ), նախ եռանկյուն ծալում, ապա մա-

կերի վրայից, ճակատի վերին մասից անցընելով, ծայրերը ծոծրակի հետևը մաղի հյուսկերի տակ իրար էին կապում։ Տոնական օրերի լաչակը ուլունքներով, փուլերով և զանազան այլ նախշերով

Զմոռներ հագուստների երիտասարդ կանայք անթարիի վրայից հագնում էին քաղաքից գնված, բրդախառն մետաքսահյուս կտորից կարված Ֆուրդիֆան, որը ուսերից հասնում էր մինչև կոճ-



Նկ. 24. 1. Մոմծալ (մոմփաթ), 2. ճիթք (տումա-բուճ)—ա. փնջիկ, բ. բուճ-կապ, 3. տումա-թոզլուխ—ա. փնջիկ, բ. կապ, 4. թաթպան, 5. տումալ (տեստիմալ)։

եզրապատված էր լինում, նույնպես և՝ չորս անկյունները։ Զափահաս ամեն մի աղջիկ իր տոնական լաչակը ինքն էր ծաղկազարդում, գեղեցկության, վայելչության համար մրցում էին մեկմեկի հետ։

Թևնոց (քոլչաք)։ Անթարի կամ շապիկի թևերը շուտ չաղտոտելու կամ մաշելու համար, հագնում էին կապույտ մահուդից կարված թևնոց, որի դաստակի կողմը ավելի նեղ էր և փոթիկավոր, իսկ մինչև արմունկը հասնելը աստիճանաբար լայնանում էր։ Թևնոցի վերին մասում նեղ խոնջդարձ էին ձգում, որից անցկացնում էին լարան և հագնելուց հետո սեղմում փոթ-փոթ անում ու կապում։

կատեղերը և ծածկում ամբողջ մարմինը. թևերը երկար էին, ուներ նեղ օձիք և կապույտ մահուդից կամ կարմիր ալից աստառ։ Քուրդիքանի քղանցքները և օձիքի եզերքները սրմաթելով ծաղկազարդված էր լինում։ Օգտագործում էին որպես վերարկու, բայց բուն ժողովրդի մեջ ընդունված չէր։

Լեռնաշխարհի հասարակ ժողովուրդը նախապատվություն էր տալիս տեղական արտադրանքին և իր ձեռքով, իր հումքից մանված, ներկված ու գործված կտորեղեններին, միայն չունենալու պարագայում հարկադրաբար դիմում էին դրսից եկած կտորեղեններին՝ մանուսա, զուրնի, ալանա, կտավ, մահուդ, ալ, վազեն և այլ բամբակյա

15—61

գործվածքներ, որոնք մեծ էին բերում առավելապես փոխանակության կարգով։

Դերոիմում քիմիական ներկեր չկային, ամեն ինչ տեղական և բնական էր՝ տորոնը, որդան կարմիրը, ընկույզի թարմ տերևը և կեղևը, զանպուրը, օրանի ծղոտը, ոսկեփայլը, անուշը (առուների եզերքին աճող բաց կարմրավուն անուշահամ ծաղիկ), թութիան, ծամտիկը (մեծ ջրերի եզերքին աճող անուշահամ արմատ, որ դեղին գույն էր տալիս) և շատ ուրիշ բույսեր, արմատներ ու ծաղիկներ օգտագործվում էին տնային հյուսվածքներ, զանազան թելեր ներկելու համար, որոնք պահում էին իրենց գույնը երկար տարիներ։

Գույների մեջ առավելապես աչքի էին ընկնում գոց կարմիրը, ճերմակն ու կանաչը։ Լեղակագույնը, սևը, մանիշակագույնը, դեղինը գրավում էին երկրորդական տեղ։

Ջարդարանք։ Գլխի հարդարանք։ Հարուստը և աղքատը, խաթունն ու գեղջկուհին հավասարապես պահպանում էին ավանդական նույն ձևերը, միայն զարդերի և կտորեղենների ընտրության և գործածության ժամանակ ակնհայտ կերպով երևվում էր նրանց տարբերությունը։ Այսպես՝ բեկերի, աղաների ու մեծահարուստների գործածած զարդեղենը զուտ ոսկուց էր լինում, տոհմային մեծ գերդաստաններինը կեսը ոսկի, կեսը արծաթ, բուն ժողովրդինը, լիներ խաշնարած կամ հողագործ՝ արծաթ և փենեզ, չքավորներինը՝ փենեզ, փուլ, ճլուն (ուլունք)։

Թեփելիկ։ Շինվում էր ոսկուց կամ արծաթից և հյուսվում կամ ծաղկազարդվում համապատասխան թելերով։ Թեփելիկը սկավառակաձև կիսաթագ էր, որը կրում էին նոր հարսները և չափահաս կանայք։ Կարում էին քոֆու վրա, որի աջ և ձախ կողմերին, ականջների ուղղությամբ, անկեր կային, աջ անկին ամրացված նուրբ շղթան անցնում էր կզակի տակից և ձախ ականջի ետևի կողմից միանում ձախ անկին։

Նախքան թեփելիկը դնելը, գլուխը հարդարում էին հետևյալ ձևով՝ ճակատի լայնքի համեմատությամբ. մինչև ճակատի կեսից քիչ վար հասնելու պայմանով, կարում էին մազերը և հարդարում ճակատի վրա, ապա մազերի կեսից վեր ճակատին լայնակի ձևով կապում էին փուշի, որը նախ ծալում էին եռանկյունի, ապա իրար վրա՝ ծալծալ (զաթ-զաթ) և կապում ճակատի կտրված մազերի վրայից ու ամրացնում ծոծրակին։ Ճակատի կապի տակից երևում էին հոնքերից քիչ վեր ընկած կտրված մազերի փնջիկները, որ կոչում էին փոռիկ կամ փոռք։

Թեփելիկի ճակատին նայող մասում նուրբ շղթայիկներով կախված էին լինում ոսկի կամ արծաթ զրտմներ, որոնք, սկսած ձախ հոնքի հատման ուղղությունից, հասնում էին աջ հոնքի հատման տեղին և անցնելով նակրտկապի երեցած մասի վրայից, հասնում փոռիկներին ու միախառնվում դրանց։ Թեփելիկի միացյալ եզերքներից ավելի կարճ շղթաներով կախված էին լինում ավելի փոքր ոսկե կամ արծաթե զարդեր, մեջընդմեջ անցկացված փուլերով։

Եթե թեփելիկի եզերքներից կախված էին լինում միայն մանր զարդեր և ճակատի վրա դրամներ չէին լինում, ճակտրկապի վրայից նույն ձևով և նույն համեմատությամբ կապում էին առանձին ճակտնոց։ Ճակտնոցը իրար ագուցված ոսկե կամ արծաթե շղթան էր, որը կազմված էր ճակատի ամբողջ երկարությամբ համաչափ իրար միացած շղթաներից՝ վարի եզերքից բարակ և նուրբ անկերից կախված ոսկե կամ արծաթե դրամներ (աղքատներինը՝ փենեզներ)։ Խիտ-փիտ իրար կողքի կախված դրամները ծածկում էին միմյանց՝ կես առ կես, այնպես, որ դիմացից դիտողը դրամների կեսերն էր միայն տեսնում։ Այս ձևի ճակտնոցը կապում էին ճակտրկապի կեսի վրայից և եզերքներն իրար միացնում ու ամրացնում ծոծրակին։ Ճակտնոցի շղթաներից կախված դրամները հասնում էին փոռիկների կտրվածքին։

Ճակտնոցի վերին շղթայից ոսկե կամ արծաթե կեռիկները անցկացնում էին թեփելիկի եզերքի այն անկերից, որոնք դրված էին նույն համաչափությամբ, և շարժուն ճակտնոցը դառնում էր թեփելիկի լրացուցիչ մաս՝ համապատասխան զարդերով։

Բացի ճակատի կտրված մազերից (փոռիկ), կտրում էին նաև ականջների վերևի հյուսկերը, որոնք ականջների կողքով այտի վրայից հասնում էին մինչև կզակոսկրի հատման տեղը։ Այդ մազափնջերը կոչվում էին զյուլֆ։

Թեփելիկի երկու քովերի անկերից կախված այն շղթան, որ անցնում էր կզակի տակից և կապվում մյուս անկին, անցնում էր երկու կողմի զյուլֆերի վրայից և ծառայում որպես ծամթել, որոնց վրա փաթաթում էին կտրված մազերի փունջիկները և զյուլֆիներին տալիս խոպոպի ձև, այնպես որ հարսի գլխի թեփելիկի տակից երևում էին ճակտրկապի մի մասը, ճակտնոցը, թեփելիկի եզերքից կախված փոքր զարդերը, կտրված և ճակատին ընկած մազերի փոռիկի մի մասը, իսկ ճակատից վար, դեպի կզակը՝ շրջանակաձև զյուլֆի խոպոպները։ Սրանց եթե ավելացնենք ականջ-



Նկ. 25 .Կնոջ արդուզարդի պիտույքներ։ 1. քեմեր (ոսկե), 2. քեմեր, 3. ապարանջան (ոսկե դրամից), ա. ոսկեթել շղթա, 4. ապարանջան (պիլեզիկ, արծաթապատ), 5. ճակտնոց (առանց թեփելիկի), 6. վզնոց (կերտանլղ, մանյակ), 7. ծամկալ (ծամթել), ա. ծոպեր (արծաթե կամ հուլունքից), 8—9. խզմաներ, 10. փուլ, 11. թեփելիկ—ա, գ. անկ, բ. շղթա, դ. ոսկեդրամ, 12. արծաթաթել պիլեզիկ, 13. պիլեզիկ (հուլունքով զարդված)։



Նկ. 26. Հայուստի նախշեր։ 1. բուճ եկր—տումա (գուլպայի բերանի գունավոր նախշ), 2. խաչ-պատ (տումա-թոզլուզի գունավոր նախշ), 3. արմուկ (տումա-թոզլուզի գունավոր նախշ), 4. շապկեր (շապիկի օձիրի գունավոր ձեսագործ), 5. կայեր (կոյեր՝ գուլպայի գունավոր նախշ), 6. իշլիկի կրծքի գունավոր նախշ, 7. բենխաչք (գուլպայի գունավոր նախշ)։

ներից կախված գնդաձև օղերը (զինդ), քթին ամրացված իզման, կարմիր այային դաղված աստղաձև կամ սրտաձև դամզան, ապա դիմանկարը կդառնա կատարյալ։

Վզնոց-մանյակ (կերտանլզ)։ Վզնոցի և մանյակի զանազան տեսակներ կային՝ ոսկե, արծաթե, վենեզե, ուլունքե, սաթե, նույնիսկ խխունջի պատյաններից պատրաստված։

Վզնոցը ոսկե կամ արծաթե շղթայի վրա ամրացված թրքական դրամների շարք էր (շարոց), եթե կրողը խանում կամ խաթուն էր, այսինքն՝ աղայի, բեկի կամ մեծահարուստի հարս։ Վզնոցի ոլորուն ոսկե շղթայի կենտրոնից կախում էին հինգ ու մեկնոց (պեշի պիրլիկ) թրքական դրամը, ապա ոսկե անկերից կախում էին մեկ-մեկ քոմից (թրքական երկուսուկես ոսկե դրամ), քոմիցներին հաջորդում էին մեկ ոսկինոցներ և շարունակաբար։ Հարուստների վզնոցը փոխանակ մեծ ու փոքր ոսկիների շարոցից, ընդհանուր ոսկեշարը լինում էր հինգ մեկնոցներով, երկու կողմի շարքերը՝ քոմիցներ, մեջտեղը՝ մեկ հինգ-մեկնոց, կենտրոնում՝ մի քոմից, եզրաշարերը թրքական մեկ ոսկինոց և շարունակաբար։

Նույն ձևով և նույն դասավորությամբ կային և արծաթե դրամներից կազմված համաձև վզնոցներ։

Մանյակե կրծքնոց (կերտանլզ)։ Մանյակը կիսալուսնի ձևով, ոսկե կամ արծաթե թելերով նախշված և թանկագին քարերով զարդարված կրծքի զարդ էր, որի երկու ծայրերին ամրացված շղթաները կեռիկներով կամ փակոցով ծոծրակի վրա միացնում էին իրար։ Կային մանյակներ, որ բացի ակնակուռ քարերից, բոլորակաձև ոսկե դրամներով էին եզրակալված, իսկ կային էլ, որ առանց շղթաների, հատուկ կեռիկներով կամ փակոցներով ամրացվում էին կրծկալին։ Մանյակի գործածության ժամանակ նույնպես հարուստն ու աղքատը զանազանվում էին՝ թանկարժեք մետաղի և ակնեղենի փոխարեն գունավոր պարզ քարեր, ոսկու փոխարեն արծաթ կամ փեներ։

Ապարանջան (պիլեզիկ)։ Ոսկե կամ արծաթե դրամներով, քառակուսի սալիկներով և կամ ոսկե ու արծաթե ոլորված թելերով զանազան ձևերի ապարանջանների տեսակներ շատ կային, երբեմն նույնիսկ ուլունքով աշխատված։ Դրամով պատրաստված ապարանջաններ՝ փոքրիկ շղթաներով դրամները կապում էին իրար, այսինքն՝ դրամների թուրայի կողմը երևալու պայմանով շղթաներով միացնում էին դրամի եզերքներին փակցված զույգ անկերի միջոցով։ Իսկ սալիկները, որ սավաթ կամ սավաթլի էին կոչվում (արծաթ), նույն ձևի շղթաներով կապված էին մեկը մյուսին։

Քամար (բեմեր)։ Նորահարսների, նույնիսկ տարիքոտ կանանց մեջքի զարդը քամարն էր։ Ապարանջանի հետ ներդաշնակությունը պահելու համար ինչ ձևով որ ապարանջան էին դնում, նույն ձևով էլ քամար էին կապում, այսինքն՝ եթե քամարը քառակուսի ոսկե կամ արծաթե սալիկներով էր շինված, նույն ձևով էլ ապարանջան էին շինել տալիս։ Քամարի և ապարանջանի ձևի ու

կառույցի միջև տարբերություն չկար, միայն ապարանջանը ավելի փոքր էր լինում և փոքր քառյակներով կամ դրամներով աշխատված, իսկ քամարը մեծ սալիկներով էր շինվում։

Մեծահարուստների կանանց քամարները ակնոցարդված էին։ Քամարի կենտրոնում զետեղված հինգ-մեկնոց ոսկի դրամի աջ և ձախ կողմերում դրվում էին քոմիցները, որոնց հաջորդում էին մեկ ոսկինոց, ապա երկու կողմերից նորից հինգ-մեկնոցներ, կրկին քոմիցներ և լիրաներ, մինչև որ քամարը վերջնականապես կազմվում էր։ Ոսկեդրամներն իրար միացնող շղթաների վրա զետեղում էին թանկարժեք քարեր, այս ձևով կազմված քամարը մեկ նեղանում, կրկին լայնանում և աստիճանաբար ելևէջներով հասնում էր հատման ծայրերին, ուր հինգ-մեկնոցով երկու ծայրերը պորտի վրա միանում էին իրար։

Կային և ոսկեթել հյուսվածքով, իրար աղուցված նուրբ շղթաներով միակտուր և զանազան նախշերով ծաղկազարդված ադամանդակուռ քամարներ և կամ ոսկե սալիկներով իրար շղթայված քամարներ։

Անկախ որպես զարդ գործածված քամաբներից, կային և ոսկեպահեստ քամարներ, որոնք պատրաստվում էին կաշվից, համեմատած դրամի չափին։ Մեջքի չափով կարում էին կաշվե երկար ընդունարան, որի պարապության մեջ դրվում էր կաշվե լեզու, իսկ այդ լեզվի վրա դրամի չափով տեղեր էին բացվում, լեզվի երկու ծայրերին կաշվե սրբմներ էին կարված։ Երբ ուզում էին լեզուն դուրս բերել և դրամ զետեղել կամ հանել, քաշում էին վերի ծայրին ամրացված սրբմը, իսկ երբ դրամը զետեղված էր, քաշում էին վարի մասի սրբմը և լեզուն իր ոսկիներով անհետանում էր կաշվե պատյանի մեջ։ Նման քամարները կապում էին մեջքին, թումպանի և շապիկի վրայից և թաքցնում խոնջեղարձի իշլիկի ու գոտիկի տակ։ Ոսկեպահեստ քամարները երեք տեսակ էին լինում՝ հինգ-մեկնոցի, քոմիցի և լիրայի չափսերով։

Վերը նշված ոսկե քամարից բացի, կային նույն ձևով արծաթից պատրաստված կամ գունավոր ուլունքներից հյուսված ու փուլերով զարդարված քամարներ, որպիսիք գործ էին ածում չքավորները։

Ծամկալ։ Չափահաս աղջիկները, նայած ծամերի խտությանը և երկարությանը, մազերը հյուսում էին երեքից-յոթ հյուսքով, իսկ տարիքավորները՝ երկու հյուսքով։ Երբ հյուսքերը շատ էին լինում, այսինքն՝ չորսից-յոթը, մեջքի մեջտեղում հյուսված ծամթելով զատ-զատ կապում էին, որպեսզի հյուսքերը այս ու այն կողմ չթեքվեին։ Հյուսքերի վերջույթում մազերի ծայրերը չորս մատնաչափ չհուսած էին ձգում, մի փոքր մասը անջատում ու շատ նուրբ մի հյուսք շինում, որով և կապում էին մազափնջիկը, որպեսզի հյուսքը չքանդվեր, իսկ հյուսքի ամեն մի փնջիկի կապված տեղից կախում էին ծամկալը։

Ծամկալը շինում էին ոսկուց, արծաթից, աշխատված ոսկրից կամ հյուսում ուլունքից կամ փուլից, նայած կրողի նյութական կարողությանը։ Տարբերվում էին ծամկալների ոչ թե ձևերը, այլ արժեքը։ Ծամկալը գործածում էին չափահաս աղջիկները և նորահարսները, իսկ ծամթելը՝ առատ մազ և շատ հյուսք ունեցողները։

Խզմա (խզմի)։ Այս զարդը քրդական էր, բայց հայերից ոմանք օգտագործում էին։ Խզման էլ պատրաստում էին ոսկուց կամ արծաթից, ծաղկազարդում զանազան նախշերով. կային, որ խզմայի կենտրոնից վեր բարձրացած մասում կապույտ ուլունք, կային էլ, որ թանկագին քարեր էին դնում։

Խզման առհասարակ կլոր էր լինում, երբեմն էլ սրտաձև ու աստղաձև, բոլորն էլ փորագրված կամ ծաղկազարդված։ Խզման ամրացնում էին քթի ծակի մոտ մասին դրսի կողմից։ Դեռ օրորոցում գտնվելիս աղջիկների ականջները ծակում և դերձան էին անցկացնում, որ ծակը չգոցվեր։ Նույն ձևով ծակում և վարժեցնում էին քթի կամ շրթունքի խզմայի ծակերը։

Ականջ կամ քիթ ծակելու գործողությունը կատարում էր տան մեծ հարսը։ Նախ ասեղը մեղրամոմի բոցի վրա այրում, ապա սրբում, ձեթի կամ օճառի մեջ թաթախում ու ծակում էր։

Հայերից քչերը, իսկ քրդերը ընդհանրապես դաղում էին մարմնի զանազան մասերը, ճակատին՝ աստղ, այտի փոսիկին՝ կիսալուսին, թունջին՝ սիրտ, կրծքին՝ թևավոր հրեշտակ, բազուկին՝ ուժեղ և առնական մարդու պատկեր և զանազան ձևերի այլ նկարներ կամ ծաղիկներ էին պատկերում։

Փենեզ։ Աղքատի զարդոսկին փենեզն էր, որը չժանգոտվող ոսկեգույն մետաղ էր, կտրված ոսկե դրամի ձևով և նույն ծաղիկներով։

Փենեզը կարում էին ֆոֆու եզերքին, շինել էին տալիս ճակտընոցներ, կերտանլղներ, ապարանջաններ, օղեր, նույնիսկ քամարներ։

Հարդարանքն իր արտաքին ձևով մնում էր նույնը, փոխվում էր մետաղը, որը անհամեմատ աժան էր, քան արծաթը և բավարարում էր զարդարվել ուզող չքավորների պահանջը։

Փուլ։ Կարծր և դիմացկուն ոսկեգույն մեհաղ էր, կլոր, ուներ շատ փոքր տրամագիծ։ Փուլի կենտրոնում ասեղ անցընելու մեծությամբ ծակ կար, կարում էին լաչակների եզերքին, կախում ծամկալների փնջիկներից և օգտագործում ուլունքով խառն ասեղնագործության ժամանակ։

Փուլը և ուլունքը չքավոր դասակարգի զարդանքի լրացուցիչ մասն էին կազմում, ուր ուլունքն էր գործածվում, այնտեղ ներկա էր և փուլը։

Տղամարդկանց ճարդարանք։ Երիտասարդները մինչ ամուսնանալը գլխի մազերը ղրխում էին (խուզել) հավասարապես, միայն ճակատին նայող մասի կենտրոնում ձգում էին մի բուռ ծամ, որը փեռչեմ էր կոչվում։ Փեռչեմի ծայրի մի մասը ձախ ականջի մոտից դեպի ճակատը դուրս էին թողնում նախշուն արախչու տակից։

Չափահասները խնամքով բեխեր էին պահում, որ ոլորված վեր էին բարձրացնում քթի երկու կողմերից։ Բեխ խուզելը կամ բեխին մկրատ զարնելը ամոթանք և նույնիսկ մեղք էին համարում։ Տարեցներից ոմանք մորուս էին թողնում և դարձյալ պահում մաքուր, միշտ սանրված։ Բեխն ու մորուսը պատվավոր տեղ էին դրավում, նույնիսկ երբեմն սպառնում կամ երդվում էին դրանցով՝ «Պեխերս կռիմկը էկեր...», «Մորուքս վկա, եթե....»[1]։

Հայ թե քուրդ, առանց սեռի խտրության, մարմնի ծածկված մասերում գտնվող իրենց ավելորդ մազերը մկրատով չէին խուզում, ոչ էլ ածելում, մանավանդ կանայք դա մեղք էին համարում։ Թևերի տակի, երկու զիստերի իրար միացած տեղի առաջամասի մազերը կաղնի փայտի մաղված փոշու և գոլ ջրի լուծույթով էին մաքրում, իսկ այն կանայք կամ աղջիկները, որոնք դեմքերին աղվամազ կամ հազիվ նշմարելի բեխիկներ էին ունենում, մաքրում էին աղտայով։ Սա ալյուրի և շաքարաջրի խառնուրդով պատրաստված պինդ խմոր էր, որը փակցնում էին դեմքի այն մասին, ուր աղվամազն էր բուսել։ Աղտան այն հատկությունն ուներ, որ պոկելով ավելորդ մազերը, հետք չէր թողնում մաշկի վրա։ Եթե մարմնի ավելորդ մազերը պոկելով մաքրում էին, մեծ խնամք էին տանում գլխի մազերն առավելագույն չափով աճեցնելուն։ Ծամը կնոջ վայելչության և գեղեցկության մասն էր կազմում։ Ծամերի արմատները հաստացնելու, մազերը խտացնելու և երկարացնելու առաջին պայմանը գլուխ լվալն էր։ Կանայք չէին ասում լողացա, այլ ասում էին՝ գլուխս լվացի։ Շաբաթը մի անգամ պարտադիր կերպով լողանալու կարգ էր սահմանված, իսկ չափահաս աղջիկները և նոր հարսները երբեմն երկու անգամ էին գլուխ լվանում՝ մի անգամ ամբողջ մարմինը, մյուս անգամ՝ գոնե մազերը։ Գլուխ լվանալիս օճառ չէին գործածում, ասում էին, թե օճառը վնասում է մազերի աճմանը, ուստի մազերը լվանում էին միայն կավով։ Այն գյուղերը, որ կավահանք չունեին, տարեկան իրենց տան անդամներին բավարարելու չափ կավ էին ձեռք բերում փոխանակության միջոցով։ Կավով լվացած գլուխը չէր անծոտում, հետևաբար և չէր ոջլոտում։ Մյուս կողմից կավը առատ սնունդ էր հայթայթում մազերի արմատներին և հնարավորություն տալիս մազերի ոչ միայն աճմանը, այլև նրբանալուն և կակղելուն։ Ամեն աղջիկ կամ հարս իր կավամանն ուներ և միշտ խնամք էր տանում, որ կավը իր ամանից չպակասեր կամ չչորանար։ Մեկի գործածած կավամանից կավ վերցնելը վնասակար էր համարվում։ Կավը պահում էին մեծ քյուփերի մեջ, որը կոչում էին կավնտեղ կամ կավամպար, կավնտան։ Քյուփերի բերանները սեկով կապում էին, ապա դնում խուփը։ Կավամանը հողից շինված և լավ թրծված քարղան էր, որը կեչիի սև, բայց հոտավետ ու անուշ ձյութով օծված և ծաղկազարդված էր լինում։

Քրդերի և հայերի միջև եղած տարբերությունները հետևյալներն էին՝ քրդերը թլպատվում էին, հայերը՝ ոչ։ Քուրդ կանանց քիթը ծակում և խզմա էին անցընում, հայ կինը չուներ այդ սովորությունը։ Քուրդ կնոջ ճակատի մազերը մինչև կեսը հավասար կտրում և զիլյոֆ էին անում, ականջների վերևի մազերից խոպոպներ շինում, իսկ հայերը՝ ոչ։ Քուրդ կինը արհեստական դաղումներով նկարներ, ծաղիկներ, սպիներ էր դրոշմում դեմքի որոշ մասերին՝ թևերին, կրծքին, իսկ հայերից առանձին անհատներ էին կատարում նման դաջումներ։

Մարմնի առողջապահություն, լոգանք, լվացք։ Վերը ասվեց, թե շաբաթը մի անգամ լողանալու կարգ էր սահմանված։ Դա վերաբերում էր միայն կանանց, տղամարդիկ ձմեռը լվացվում էին տասնըհինգ օրը, երբեմն ամիսը մի անգամ (տոների,

[1] Քրդերի մեծամասնությունը բեխ և մորուս ուներ, իսկ չորս օջախների պատկանող ժառանգական օջախլամեները (ռեյսեր, սեիտ, տեսե, մյուրշուտ), փիրը և փիրե-փիրաներն ու նրանց ժառանգորդները բնավ ածելի կամ մկրատ չէին զարնում իրենց բեխերին ու մորուսներին։ Մորուս և բեխ հայհոյելը ամենածանր անարգանքն էր նկատվում, և ենթական պատժվում էր մահվամբ, եթե կրոնապետի, անմար սրբարան օջախի տիրոջ կամ նրանց ժառանգորդների մորուսն ու բեխերն էին հայհոյված։

հարսանիքների, ուխտագնացության, մկրտության նախօրյակին), գարնանը և աշնանը՝ շաբաթը կամ տասնհինգ օրը մի անգամ, իսկ ամռանը սառը ջրով, ձորերում, լճերում կամ գետերում, գրեթե ամեն օր։

Ճերմակեղենը (թումբան և վարտիք) փոխում էին շաբաթը կամ տասնհինգ օրը մի անգամ՝ լողանալիս, իշլիկը, բուճերը, թոգլուխները ամեն շաբաթ փոխում էին միայն ոտքերը մինչև ծնկները լվանալուց հետո, իսկ արտահագուստը՝ տոնական օրերին։

Լվացքը լվանում էին աղարթատանը, ուր լվացվելու հատուկ չայեր և օջախներ կային, աղարթատուն չունեցողները լվացքը անում էին թոնրատան օջախի կամ միջանցքի հարմարագույն վայրում։ Գարնանից մինչև աշնան ցրտերը լվացքը տանում էին տնամերձ աղբյուրների կամ առուների եզերքին, ուր և փռում էին չափառների վրա ու չորացնում։ Ճերմակեղենը լվանում էին տաք ջրով, տանը պատրաստված օճառով, նախ ճմլում, ապա թակում, վերջը սառը ջրով ցայում էին։

Լճեպճեր պորտ և սավան ունեին, իսկ անկողինների վրա փռում էին տանը գործված փալաս, որը սավանի դեր էր կատարում։ Լճեպի (վերմակ) պորտը չէին փոխում, այլ փոխում էին սավանը՝ յողնեբեսը. տեշկերեսը անցընում էին կտավի տոպրակի մեջ դրված և բերանը կարված բրդի անկողնու վրայից և լվանում ամիսը մի անգամ, երբ անկողինները արևկող էին անում և բրդերը արևի տակ չբխում։ Տեշկերեսները կարում էին հատուկ տպածո հաստ կտորից, որը գնում էին շրջկենտրոններից կամ շարչիներից։ Երեխաների վերմակների սավանը ալ, իսկ տեշկերեսը կապույտ մահուդի կտավից էին կարում, հյուրերի անկողինների երեսները՝ դուբնիից կամ ալաճայից, իսկ վերմակների պորտը՝ ծաղկուն փաղենից, չթից կամ շղարշից, սավանը՝ սպիտակ կտավից։

Կային նստելու, թիկն տալու և անկողնու բարձեր։ Առաջին երկուսը մեջը խոտով լցված, տանը գործված կապերտներ էին, իսկ անկողնու բարձերը բրդով լցված կտորեղենից կամ գունավոր կտավից ու չթից էին կարում։ Քնելու բարձի երկարությունը համապատասխանում էր անկողնու (ներքնակ) լայնքին, լայն ու բարձր։

ԿԵՐԱԿՈՒՐ ԵՎ ԽՄԻՉՔ

Լեռնաշխարհի բնակչությունը ընդհանրապես սնվում էր կաթնեղենով։ Առանց մածունի, թանի կամ արդար յուղի (հալած կարագ) ճաշերը հազվադեպ էին։ Բացի մատաղներից, հոգու հացից, հյուրերի պատվին սարքված խորովածներից, միս չէին ուտում։ Միսն օգտագործում էին չափավոր, նոյեմբերից մինչև մարտի կեսերը, թարմ կամ ղավուրմա, իսկ մարտից մինչև հոկտեմբերի վերջը սնվում էին առավելապես կարագ յուղով, բանջարեղենով և կաթնամթերքներով պատրաստված կերակուրներով։ Կլիմայական պայմանները և դարերի փորձառությունը սովորեցրել էր լեռնցիներին տարին յոթուկես ամիս միս չօգտագործել, ոչ թե մսի պակասի հետևանքով, այլ ուղղակի առողջապահական նկատառումներով, այլասլես հաղարներով ոչխար և այծ ունեցող տնտեսության համար ոչինչ չէր պակասի, եթե տարվա այդ ամիսներին հաղար գառից երկու հարյուրը մորթեր սնդի համար։ Դերսիմցին ավանդաբար պահում էր այն սովորությունը, թե միսը օգտակար է այն ժամանակ, երբ օդը զով է և եղանակը ցուրտ, մանավանդ երբ լավ սնված կենդանու ոսկորը ծուծով լցված, դմակը հաստացած, կուրծքը յուղոտած և երիկամունքները ճարպի մեջ կորած էին լինում։

Մսեղենի դեպքում էլ, սակայն, ավելի օգտագործում էին արդար յուղը և մածնախառն ու բուսական, հատկապես հատիկեղենից պատրաստված կերակուրները։ Գարնան ամբողջ տևողությանը և ամռան ամիսներին սնվում էին վայրի ու ընտանի բանջարների, բողիների, սունկի տապկոցներով կամ աղցաններով։

Վայրի կանաչին լեռներից և անտառներից հավաքելու պարտականությունը տան չափահաս աղջիկների և հարսների գործն էր։ Դրանք օգտագործում էին կանաչ վիճակում, մի մասն էլ թթու էին դնում, մնացյալը հյուսում ու չորացնում որպես ձմռան պաշար։

Լեռնաշխարհի առատ բուսականությունը և կաթնամթերքը միջոց էին ստեղծել, որ մարդիկ դառնան յուղակեր, բուսակեր, կաթնակեր, բայց ոչ մսակեր։

Լեռնցիների մեջ հավկիթի (ձու) գործածությունը մեծ չափերի էր հասնում։ Այն օգտագործում էին խաշած վիճակում և ձվածեղ, տապկոցներ կամ ճմուռ պատրաստելիս։ Զուն և մածունը գյուղացի տանտիկնոջ պատրաստի կերակուրն էր, նա չէր նեղվում անակնկալ հյուրեր ընդունելուց, քանի՞ որ տանը միշտ պատրաստ ձու, մածուն և յուղ ուներ։

Բացի Եղիրաա և Արածանի գետերի մերձափնյա գյուղերից և Քղիի, Բալուի ու Զարսանջակի շըր-